community

The New Apostolic Church around the world

02/2021/AM

Հիսուսի գալստյան հույսը

Խմբագրական
Հոգևոր կայունություն

Ժամերգություն
Քրիստոսը - մեր ապագան

Եկեղեցական ուսմունք
Մարդկային կյանքի ավարտը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Հոգևոր կայունություն

Ժամերգություն

4 Քրիստոսը - մեր ապագան

Մանկական անկյուն

10 Սավուղի դարձի գալը

12 Այցելություն Դեյվիդին՝ Էքսու / Բրազիալիա/

Տեսություն

14 Մարդկային կյանքի ավարտը

Ընդհանուր նորություններ

18 Փոփոխություններ առաքյալների շրջանում

- Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի / Արխիվային նկար, եկեղեցու վարչությունը Ցյուրիխում, 11.2018)
- Շապիկի ետևի լուսանկարը՝ Հարավային Աֆրիկայի ՆԱԵ

Հոգևոր կայունություն

Լուսանկարը՝ Միջազգային ԱՄԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

մեր հավատամքի երկրորդ դրույթում մենք խոստովանում ենք մեր հավատը Որդի Աստծո հանդեպ՝

,, Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին, Աստծո միածին Որդուն՝ Մեր Տիրոջը, ով լցվել է Սուրբ Հոգով, ծնվել է Սուրբ կույս Մարիամից, տառապել է պոնտացի Պիղատոսի օրոք, խաչվել է, թաղվել, գնացել մահվան թագավորություն, երրորդ օրը հարություն է առել մեռելներից, համբարձվել է երկինք; նա նստած է Աստծո՝ ամենազոր Հոր աջ կողմում, այնտեղից էլ նա նորից գալու է,,:

Այս խոստովանությունը մեզ ուղեկցում է մեր ողջ կյանքում, այն բովանդակությունն է մեր ժամերգությունների ու զրույցների: Այն նաև արտահայտությունն է Աստծո հանդեպ մեր վերաբերմունքի և մեր ապրած վստահության ու հույսի: Մեր հավատի երեք հիմնասյուներ ենք մենք դրանից բխեցում: Դրանք մեզ հոգևոր կայունություն են տալիս ողջ տարվա համար՝

- Հիսուսը սիրում է ինձ: Նա ապացուցել է իր սերը: Նա մահացել է քեզ և ինձ համար:
- Հիսուսն ամենազոր է: Նա ունի անսահման իշխանություն: Նա հաղթահարել է մեղքը, մահը և դժոխքը:
- Հիսուսը նորից է գալու: Նա գալու է շուտով - մեր փրկության, մեր ազատության համար:

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ, այս երեք հիմնասյուները մեզ կողմնորոշում և կայունություն են տալիս մեր կյանքում - անգամ, եթե դրանք մի օր ցնցվեն, երբ քամին ուժգին փչի մեր դեմքին:

2021-ին ևս մենք վճռական ենք մնում՝ մենք կողմնորոշվում ենք Հիսուս Քրիստոսով: Մենք պետք է համապատասխանենք Աստծո կամքին: Եկեք միշտ քննենք մեզ, թե արդյոք մեր կյանքում ամեն ինչ համապատասխանում է Հիսուս Քրիստոսի կամքին: Իսկ եթե ոչ, եկեք ձեռնարկենք անհրաժեշտ միջոցառումներն ու ուղղումները:

Տերը շուտով գալու է: Դա մեր հավատն է, մեր վստահությունը և մեր ուրախությունը:

Սրտագին ողջույններ

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Քրիստոսը- մեր ապագան

2021-ի հունվարի 3-ին՝ կիրակի օրը, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը տարեսկզբի ժամերգությունը տոնեց Վինթերտուրի /Շվեյցարիա / համայնքում

Լուսանկարները՝ ՆԱԵ Շվեյցարիա

Սրտանց սիրելի քույրեր ու եղբայրներ, նախ ցանկանում եմ Հյուսիսային և Արևելյան Գերմանիայի բոլոր քույր-եղբայրների անունից շնորհակալություն հայտնել Վինթերտուրի համայնքին, որ այսօր առավոտյան մեզ ընդունեց, և ես հիմա կարողանում եմ այստեղ ժամերգություն անցկացնել Հյուսիսային և Արևելյան Գերմանիայի մեր քույր-եղբայրների համար:

Ես չգիտեմ, թե ով է ընտրել ժամերգության սկզբի երգը, բայց ես ցանկանում եմ նաև դրա համար շնորհակալություն հայտնել: Ինձ համար դժվար է ձեզ հետ միասին այդպես զորեղ երգելը և ես միայն ձայնակցում եմ: Ես այնքան գեղեցիկ եմ համարում այն միտքը, որ Տերը շարունակում է կառուցել իր գործը՝ ,, Փառահեղորեն, փառահեղորեն է Աստված կառուցում իր գործը,,: Դա նրա ծրագիրն այս նոր տարվա համար: Թե ինչ է մեզ սպասում այս տարվա ընթացքում, որպես պատասխան մենք շատ հարցական նշաններ ենք դնում: Ոչ մի մարդ ճշգրիտ չգիտի դրա մասին, բայց մի բան հաստատ է, որ Տերն ունի իր ծրագիրը և այն շարունակելու է: Նա իր պլանը շարունակելու է նաև 2021-ին: Ես անցած տարվա առումով արդեն

Եբրայեցիներին 12, 1,2

,, Համբերությամբ ընթանանք դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առաջ, նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին,,:

ասել եմ և, անշուշտ, այն կրկնում եմ այս տարվա համար՝ 2021-ը մեր Աստծո փրկչական պլանի մի հատվածն է լինելու: Նա դա սկսել է մարդու մեղքի մեջ ընկնելուց հետո և ավարտելու է նոր արարչագործությամբ, երբ փրկվածները Աստծո մոտ լինեն, և մարդիկ ու արարչագործությունն այնպիսին դառնան, ինչպիսին Աստված է ուզում: Այդ ժամանակ կլինի խաղաղություն, ուրախություն, ցնծություն և հրճվանք, որովհետև ամեն ինչ նորից կհամապատասխանի Աստծո կամքին: Դա է Աստծո փրկչական պլանի նպատակը:

Այս փրկչական պլանի հաջորդ իրադարձությունը Հիսուս Քրիստոսի գալուստն է: Մենք վստահորեն հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը նորից է գալու և իր հետ տանելու է հարսնացուական համայնքին: Նա ուզում է նրանց ավելի շուտ իր արքայությունը տանել, որտեղ ամեն ինչ այնպես է, ինչպես Աստված է ուզում: Ապա մենք կլինենք Աստծո փառահեղության մեջ: Դա է մեր ապագան: Դրա համար ենք մենք կայացրել այն որոշումը, ըստ որի մենք ուզում ենք մասնակիցը լինել Հիսուս Քրիստոսի գալստյանը, և դրա համար էլ այս տարվա նշանաբանը հնչում է այսպես ,,, Քրիստոսը- մեր ապագան,,: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսի գալստյանը և ուզում ենք նախապատրաստվել դրան:

Հիսուսը չէր սխալվում, երբ նա կանչում էր քեզ: Նա գիտեր, որ դու դա կարող ես անել:

Անգամ քրիստոնյաներից են մեզ հարցնում, թե արդյոք մենք իսկապես վստահ հավատում ենք մեր քարոզին առ այն, որ Հիսուս Քրիստոսը նորից է գալու: Այո: Դա պատկանում է մեր առաջադրանքին: Դրա համար են ուղարկվել առաքյալները: Որպես Հիսուս Քրիստոսի դեսպաններ՝ նրանք չեն կարող ուրիշ այլ բան անել, քան տեղեկացնել Հիսուս Քրիստոսի մոտալուտ գալուստը: Դա Աստծո խոստումն է, և այն կա ու կմնա ճշմարիտ: Միևնույնն է, թե քանի մարդ դրան կհավատա: Աստծո խոստումների ճշմարտացիությունը կախված չէ դրանից: Հիշեք ջրհեղեղը: Հիշեք Մեսիայի ծնունդը: Հիշեք Հիսուս Քրիստոսի հարությունը: Քանի՞ մարդ էր այդ ժամանակ դրան հավատացել: Մի բուռ: Բայց դա Աստծուն չի խանգարել: Նա դա խոստացել է և դա էլ իրականացրել է: Դա վերաբերում է նաև Հիսուս Քրիստոսի գալստյանը: Քրիստոսը մեր ապագան է: Նա գալու է, և մենք նախապատրաստվում ենք դրան: Դրանում բացարձակ ոչ մի կասկած չկա: Մենք հավատում ենք դրան:

Շատ մարդիկ ասում են, որ դա մի պատմություն է, որ եկեղեցին պատմում է հավատացյալներին, որպեսզի նրանց մխիթարի ներկա դժվարությունները տանելի դարձնելու համար՝ ,, Մի մտահոգվեք, ամեն ինչ լավ է լինելու, վաղն ավելի լավ կլինի: Մնացեք մեզ հետ և ամեն ինչ կտեսնեք,,: Մենք, իհարկե, երազողներ չենք, որոնք ապաստան են փնտրում երազում, երբ ներկան, իրականությունը նրանց դուր չի գալիս: Քույրեր և եղբայրներ, նորառաքելական քրիստոնյան էնտուզիաստ չէ, ոչ էլ՝ երազող: Մենք գործի տղամարդիկ ու կանայք ենք: Մենք չենք երազում, այլ ունենք հստակ նպատակ՝ ներկա լինել Հիսուս Քրիստոսի գալստյանը: Եվ մենք նախապատրաստվում ենք դրան: Մենք ունենք գործողությունների պլան, որը շարունակվելու է 2021-ին:

Նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի գալստյանը, նշանակում է դառնալ այնպիսին, ինչպիսին Աստված կցանկանար մեզ տեսնել: Այս առումով մեզ համար օրինակ է Հիսուս Քրիստոսը: Նա մարդ էր, ով լիակատար համապատասխանում էր Աստծո կամքին: Քանի որ մենք ուզում ենք նրա արքայությունը գնալ, մենք պետք է դառնանք այնպիսին, ինչպիսին Աստված է ուզում, և դրա համար էլ մենք կողմնորոշվում ենք այն մարդով, ով համապատասխանում է Աստծո կամքին, այն է՝ Հիսուս Քրիստոսով: Դա մեր գործողությունների պլանն է: Նաև այստեղ է արժևորվում տարվա նշանաբանը՝ ,, Քրիստոսը- մեր ապագան,,: Մենք ուզում ենք նրա նման դառնալ, որպեսզի կարողանանք այնտեղ լինել, որտեղ նա է:

Աստվածաշնչում այդ նախապատրաստությունը հաճախ մի գեղեցիկ պատկերով է նկարագրվում, որը շատ անգամ նաև այլ տեսանկյուններով է մեկնաբանվում՝ դա մրցույթի, մրցապայքարի պատկերն է: Քրիստոնյան մրցապայքարի մեջ է, մրցում է: Դրանով Աստծո Ոգին ուզում է ցույց տալ, որ Հիսուս Քրիստոսի գալստյան նախապատրաստությունը զբոսանք չէ: Այն ամեն ինչ է, բացի հարմարավետությունից: Այն մրցույթ է: Դա նշանակում է, որ այն պահանջում է ջանք և ուժ: Պետք է եռանդ ցուցաբերել և էներգիա գործադրել: Բավարար չէ միայն ներկայանալը և մասնակցելը: Ոչ, պետք է ջանք թափել, որպեսզի դառնալ այնպիսին, ինչպիսին Աստված է ուզում: Ջանք և աշխատանք է պահանջում Աստծո կամքին համապատասխանելը: Դա այդպես է լինելու նաև այս տարի: Դրա վրա պետք է մշտապես աշխատել: Այսօր դա այնքան էլ լավ չի ընդունվում: Պետք է ամեն ինչ հարմար ու հեշտ լինի: Սակայն, Հիսուս

Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելը հարմար ու հեշտ չէ: Այն պայքար է, մրցույթ:

Մրցապայքարում ձախողման հնարավորություն կա: Մրցույթում բոլորը չեն հաղթում, այլ՝ միայն մեկը: Որպեսզի հաղթեն, որպեսզի հավիտենական կյանքի թագը ստանան, պետք է մինչև վերջ համբերությամբ սպասեն: Մեկ անգամ ևս՝ բավարար չէ միայն ներկայանալը, մասնակցելը: Պետք է մինչև վերջ պայքարել, աշխատել, գործել, ինչ էլ որ լինի: Ով նախապես դադարեցնում է, նա կորցնում է: Այս միտքն ավելի պարզ չի կարող արտահայտվել, քան նշված պատկերով: Դա մրցույթ է: Ով մինչև վերջ համբերությամբ չի սպասում, կորցնում է:

Տիմոթեոսին գրված Պողոսի երկրորդ նամակում գրված է, որ մրցույթը կարելի է հաղթել միայն այն դեպքում, եթե պայքարում են կանոնների համաձայն / հմտ . Տիմոթեոս Բ 2,5/: Պարզ է, երբ տեղի են ունենում օլիպիական խաղեր, որևէ մրցույթներ, ապա նա, ով չի պահում կանոնները, չի հաղթում: Այդ կանոնները մենք չենք որոշում: Այն որոշում է Աստված: Դրանք որոշում է Հիսուս Քրիստոսը: Այդ մրցույթի կանոններից մեկը այսպիսին է՝,, Դու պետք է կողմնորոշվես առաքյալների ուսմունքով: Նրանք տեղեկացնում են Ավետարանը,,: Մյուսն այսպիսին է՝ ,,Դու կարող ես միայն հավատացյալների միասնության մեջ երանելի դառնալ: Առանձնացողը չի կարող նպատակին հասնել,,: Ես կարևորում եմ այս երկու կանոնները: Եթե այս կանոնները չեն հարգում, չեն կարող հաղթել մրցույթում: ,, Քրիստոսը - մեր ապագան ,, նա բացարձակ վստահությամբ նորից է գալու: Որպեսզի մենք նախապատրաստվենք դրան, պետք է այնպիսին դառնանք, ինչպիսին նա է: Դա մրցապայքար է, որը շատ էներգիա է պահանջում: Մենք պետք է համբերենք, մինչև վերջ դրա վրա աշխատենք և կանոնների շրջանակում մնանք: Եբրայեցիներին գրված նամակի հեղինակն այստեղ ասում է ,,

,, Համբերությամբ ընթանանք դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առաջ, ,, - համբերությամբ, նշանակում է համբերությամբ սպասելով - ,, նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին,,: Քրիստոսը մեր ապագան է: Նա նաև այն մեկն է, ով մեզ համար հնարավոր է դարձնում ապագային հասնելը, առանց նրա մենք դա չենք կարող: Եվ այստեղ ասվում է , որ մենք պետք է Հիսուսին նայենք ուժ ստանալու և հաղթանակ ունենալու համար:

Սա նաև այս տարվա համար է շատ կարևոր՝ եկեք միշտ նայենք Հիսուս Քրիստոսին, նրանք տեսնենք, քանի որ նա է հավատի զորագլուխը: Նա է մեզ ընտրել: Ես չեմ որոշել, որ ես ուզում եմ երկինք գնալ: Նա էր առաջինը: Նա քեզ և ինձ հրավիրել ու հավերժ իր մոտ մնալ կարողանալու համար հնարավորություն է տվել: Նա դա լիովին գիտակցորեն է արել: Նա գիտեր մեզ նախքան մեր ծնունդը: Նրա համար լիովին պարզ էր, թե ինչ ենք մենք, ինչ ենք անելու, ինչ կարող ենք և ինչ չենք կարող:

Նա որոշել է, որ մենք կարող ենք դա անել և նպատակին հասնել: Եկեք նայենք մեր հավատի զորագլխին: Նա չէր սխալվում, երբ կանչում էր քեզ: Նա գիտեր, որ դու դա կարող ես անել, եթե ուզենաս: Նա տվեց իր կյանքը, զոհաբերվեց, որպեսզի դու փրկվել կարողանաս: Նա նաև քեզ միշտ ուժ է տալիս, որի կարիքը դու ունես: Եղբայրներ և քույրեր, եկեք Հիսուսին նայենք: Նրանում ենք մենք ուժ, էներգիա գտնում, որի կարիքը մենք ունենք մրցապայքարում հաղթելու համար:

Այդ ուժը հրաշալի ուժ է, ձգողական ուժ է: Այն մեզ պայքարը շարունակելու ուժ է տալիս: Նրա սիրո ձգողական ուժը օգնում է մեզ: Նայիր նրան: Հիշիր նրա սիրո մասին: Հիշիր նրա զոհաբերության մասին: Հիշիր նրա կատարելության մասին: Հիշիր նրա էության մասին: Հիշիր նրա փառահեղության մասին: Երբ մենք ինտենսիվորեն հետաքրքրվում ենք Հիսուս Քրիստոսի էությամբ, ապա դա մոտիվացնում է մեզ շարունակելու գործելը-անգամ, եթե շատ դժվար է, շատ վատ է: Երբ ես մտածում եմ Հիսուս Քրիստոսի մասին, միասնություն եմ փնտրում նրա հետ, ապա պատճառ չեմ ունենում դադարեցնելու պայքարը:

Ես միշտ այն շարունակելու պատճառ եմ ունենում, որովհետև ես ուզում եմ լինել նրա նման և հավերժ նրա մոտ: Սա է լուծումը, սա է ամենամեծ բանը, սա է մեր մոտիվացիան, սա է մեր ուժը: Եկեք միշտ նայենք Հիսուս Քրիստոսին:

Նայել, չի նշանակում է անպայման կողմնորոշվել մեր շրջապատով, ուրիշների կարծիքներից ելնելով, դժվարություններով կամ այն ամենով, ինչը տեղի է ունենում մեր շուրջը: Հիշեք Պետրոսին, երբ նա քայլում էր ջրի վրայով՝ այնքան ժամանակ, որքան նա Հիսուսին էր նայում, նրան հաջողվում էր վստահ քայլելը: Բայց երբ նա նայում էր ալիքներին և տեսնում փոթորիկը, կորցնում էր քաջությունը և սուզվում: 2021-ի համար իմ խորհուրդը սա է՝ եկեք նայենք Հիսուս Քրիստոսին, ոչ թե դժվարություններին, ոչ թե այլ մարդկանց, թե ինչ են ասում նրանք, ինչ են մտածում, ինչ են անում: Եկեք գիտակցված նայենք Հիսուս Քրիստոսին: Նա մեզ պայքարը շարունակելու ուժ է տալիս:

Եկեք գիտակցորեն նայենք Հիսուս Քրիստոսին և ոչ թե ավելի շատ այն բանին, թե ինչ ենք անում մենք: Նա է մեր հավատի կատարելագործողը: Երբ

Եպիսկոպոս Ռուդոլֆ Ֆեսսլեր / Շվեյցարիա/

մենք այն մասին մտածենք, թե ինչ ենք անում, ինչ ենք վաստակում կամ զոհաբերում, ապա մենք չենք հասնի մեր նպատակին:

Եկեք չվհատվենք մեր խնդիրներից, թուլություններից և ոչ կատարյալ լինելուց: Նա մեր հավատի կատարելագործողն է: Երբ մենք նրա արքայությունը գնանք, մենք պարտական կլինենք նրա ողորմածությանը: Դա մեզ ողջախոհ է դարձնում, մյուս կողմից՝ մեզ տալիս է հույս և վստահություն: Տիրոջ օրվան մեր մասնակից լինելը կախված ոչ թե ուրիշների կարծիքից, ոչ թե մեր արածներից, այլ՝ ողորմածությունից: Եկեք միշտ նայենք Հիսուս Քրիստոսին և ոչ թե դժվարություններին կամ մեր արածներին:

Մենք չպետք է նայենք նաև մեր կարիքներին: Երբեմն մարդկանց մոտ նման հակում է լինում: Ավելի շատ զբաղվում են իրենք՝ իրենցով, հետո ափոսում և կարեկցում են իրենց՝ ամեն ինչ այնքան վատ է ու անարդար, չէ որ արժանի չեն դրան՝ ,, Ինչու՞ ես, ու միշտ ես ու ես,,: Իսկ առաջ ավելի լավ էր, այսօր ամեն ինչ դժվարացել է, և նմանատիպ բաներ:

Նման ողբը, ինքնակարեկցանքը, սիրելի եղբայրներ ու քույրեր, դա հստակ եմ ասում, ժամանակի և էներգիայի վատնում է: Եկեք նայենք Հիսուս Քրիկստոսին: Նա կանչում է մեզ, նա ասում է մեզ՝,, Արի, դու կարող ես,,: Թույլ տանք, որ նրա սիրո ձգողական ուժը ազդի մեզ վրա: Մենք ուզում ենք վստահել նրա սիրուն, ողորմածությանը և ամենազորությանը: Նա իրականացնելու է իր գործը: Նա մեր ապագան է: Նա մեզ երաշխավորում է, որ մենք կարող ենք հասցնել, եթե նրան հետևենք: Քրիստոսն է մեր ապագայի երաշխավորը:

Մենք ապագայի մարդիկ ենք: Սակայն Հիսուս Քրիստոսին ընտրելը, որը մենք արել ենք մեր ապագայի համար, ձևավորում է նաև մեր ներկան: Եթե մենք միշտ ակտիվ նախապատրաստվենք և միշտ ցանկանանք այնպիսին լինել կամ դառնալ, ինչպիսին Աստված է ուզում, ապա դա իր ազդեցությունը կունենա մեր ներկայիս կյանքի վրա: Նաև այստեղ մենք երազողներ չենք, այլ ուզում ենք շատ կոնկրետ ձևով մեր առօրյա կյանքում կողմնորոշվել Հիսուս Քրիստոսով: Մենք արդեն այսօր ուզում ենք նրա կամքը կատարել և գործել նրա օրինակով՝ նաև դժվար ժամանակներում:

Անցած տարի շատ ճգնաժամեր եղան: Եվրոպայում մենք խոսում ենք կորոնայի մասին, երկրի մեկ այլ վայրում շատ այլ խնդիրներ կան, որոնք նույնպես դժվար լուծելի են: Մարդիկ դրանց տարբեր ձևով են արձագանքում: Օրինակ, քրիստոնյաների մոտ կան այնպիսիք, ովքեր իրենց օրինակելի են պահում: Նման պարագայում շատ գեղեցիկ բաներ կան հայտնելու: Սակայն կան նաև հակառակ բաներ: Շատ լավ է, որ ճգնաժամային իրավիճակներում նկատելի է դառնում, թե ինչ է թաքնված մարդու մեջ, ինչն է նրան հուզում, ինչն է ապրում նրա մեջ: Մի բան կա, որ ինձ անհանգստացնում է, ոչ թե հենց մեր եկեղեցում, այլ ընդհանուր քրիստոնյաների շրջանում, նրանց մոտ, ովքեր ասում են, որ իրենք քրիստոնյաներ են, ես ամրագրեցի, որ ճգնաժամային իրավիճակներում ինչքան մեծ է դեռ ,, եսի,,՝, սեփական անձի, սեփական կարծիքի, սեփական բաերեկեցության և սեփական հետաքրքրությունների առկայությունը: Շատերի մոտ այդ ,, եսը,, այնքան մեծ է, որ Հիսուսը շատ փոքր է դառնում: ,, Եսը,, այնքան մեծ է, որ ,, մենքը,, մոռացվում է: Դա արտահայտվում է տարբեր ձևերով և մտածելու տեղիք է տալիս:

Սիրելի քույր-եղբայրներ, մենք պետք է նախապատրաստվենք Հիսուս Քրիստոսի գալստյանը: Արդեն այսօր մենք յուրաքանչյուր

Գլխավոր առաքյալ Շնայդերը
Սուրբ Հաղորդությունը տոնում է
ննջեցյալների համար

իրավիճակում, ինչպիսին էլ որ լինի այդ վիճակը, կողմնորոշվում ենք մեր Տեր և Վարդապետ Հիսուս Քրիստոսի օրինակով: Հիսուս Քրիստոսի կերպարը շատ պարզ է նկարագրված՝ նա սիրո մարդ էր, նա ներում էր, օգնում էր, տալիս էր, ծառայում էր- ,,որովհետև մարդու Որդին էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու,, / Մարկոս 10,45/; նա իրեն զոհաբերում էր մերձավորի համար և կիսում էր նրա վիշտը: Սա է մեզ համար օրինակելին նաև դժվար ժամանակներում:

Երեկ ես Աստվածաշնչում մի բանի մասին կարդացի, որն ինձ շատ հուզեց: Հիսուսին հարցնում են, թե արդյոք պետք է հարկ վճարել կայսրին: Հիսուսը պատասխանում է՝,, Գնացեք տվեք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն,, / Մատթեոս 22,21/: Հիմնական պատճառը դուք գիտեք: Նրանք ուզում էին նրա հանդեպ որոգայթ լարել: Անշուշտ, նրա պատասխանը նրանց ընդհանրապես դուր չեկավ: Նրանք հույս ունեին, թե նա կասեր, որ նրանք չպետք է կայսրին հարկ վճարեն: Դա նրանց դուր կգար: Դրանով Հիսուս Քրիստոսը ցանկանում էր ցույց տալ, որ մենք, ինչպես նշված է դավանաբանության մեջ, ,, դրական հարաբերությունների մեջ լինենք պետության՝ աշխարհիկ իշխանության հետ / Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն 2,4,10/ և հնազանդ լինենք: Դա մենք՝ որպես նորառաքելական քրիստոնյաներ, խոստովանում ենք նաև մեր հավատամքի տասներոդ դրույթում: Այս շրջանակը եզրափակում են տասը պատվիրանները: Այնքանով, որքանով իշխանության, գերատեսչության կարգադրություններն ու հրահանգները Աստծո կամքի դեմ չեն լինում, մենք հնազանդվում ենք դրանց: Կան մարդիկ, ովքեր ինձ հարցնում են, թե ինչու եմ ես դիմակ կրում: Նմաններին ես պատասխանում եմ՝ ,, Որովհետև ես նորառաքելական եմ,,: Դա կառավարության հրահանգն է: Չափանիշը, որով ես պետք է հետևեմ կամ չհետևեմ այդ հրահանգին, դա Աստծո պատվիրաններից մեկն է, այլ ոչ թե իմ անձնական կարծիքը կամ հասկացողությունը: Ես առաջարկում եմ կարդալ դավանաբանության համապատասխան գլուխը: Մենք կողմնորոշվում ենք կառավարության հրահանգներով, եթե դրանք չեն խախտում Աստծո օրենքները: Դա իմ կարծիքը չէ, այլ Աստծո պատվիրանն է:

Ներկայումս մենք կողմնորոշվում ենք Հիսուս Քրիստոսի օրինակով: Մեկ անգամ ևս՝ մենք մոլեռանդներ չենք, մենք երազողներ չենք, և մինչև Տիրոջ գալուստը մենք կմնանք գործի տղամարդիկ ու կանայք և կպլանավորենք մեր ապագան երկրի վրա: Ես չգիտեմ, թե արդյոք Տերը վաղն է գալու, թե՝ տասը կամ քսան տարի հետո: Մենք աշխատելու ենք մինչև նրա գալը, պլանավորելու ենք մեր ապագան երկրի վրա: Այդ պլաններում ընդգրկում ենք Հիսուսին, և դրանք անում ենք նրա ուսմունքի, Ավետարանի հիման վրա: Մասնագիտության, ամուսնության, երեխաների դաստիարակության մեջ մենք առաջնորդվում ենք Հիսուսի Քրիստոսի ուսմունքով: Մենք ուզում ենք համապատասխանել նրա կամքին: Երկրային, նյութական բաների նկատմամբ մեր վերաբերմունքի համար կարևոր է, երբ մենք հիմնվում ենք Հիսուս Քրիստոսի պատվիրանի վրա: Մերձավորի հանդեպ մեր վերաբերմունքի համար կարևոր է, որ մենք կատարում ենք Ավետարանի կանոնները: Դա վերաբերում է նաև տարվա նշանաբանին՝ ,, Քրիստոսը- մեր ապագան,,: Դա մեր ընտրությունն է և դրա համար էլ մենք ակտիվորեն նախապատրաստվում ենք: Դա շատ ջանք է պահանջում, սակայն մենք համբերությամբ սպասելու ենք մինչև վերջ: Դրա համար անհրաժեշտ ուժը մենք ստանում ենք Հիսուս Քրիստոսից: Մենք նայում ենք միայն նրան: Նա է մեր հավատի զորագլուխն ու կատարելագործողը: Նա մեր օրինակելին է, մոտիվացիան: Նրանով ենք մենք կողմնորոշվում: Դա իր ազդեցությունն ունի մեր ներկայի վրա և մեր պլանների վրա, որոնք մենք երկրի վրա կազմում ենք մեր ապագայի համար:

Ես կցանկանայի ևս մի կետ նշել տարվա մեր նշանաբանի առումով, որը ես ընտրել եմ և որին իրենց համաձայնությունն են տվել շրջանային առաքյալները՝ ,, Քրիստոսը- մեր ապագան,,: Սա, անշուշտ, չի նշանակում, որ ,, Քրիստոսը ի՛մ ապագան է,,; այլ՝ այն, որ ,, Քրիստոսը մե՛ր ապագան է,,: Կարևոր են Աստծո կանոնները: Կարելի է միայն հավատացյալների միության մեջ երանելի

դառնալ: Առանձին գնացողները մրցույթում չեն հաղթում: Համայնքի ներսում մենք յուրաքանչյուր տեսանկյունից շատ տարբեր ենք: Կարծիքները, իրավիճակները, կյանքի պայմանները-ամեն ինչ շատ տարբեր է: Սակայն, այս տարի ևս մենք կենտրոնացել ենք այն բանի վրա, որ մենք ունենք նույն նպատակը և բոլորս պետք է գնանք նույն ճանապարհով, որպեսզի հասնենք այդ նպատակին: Դրան ես հիմա բոլորովին չեմ ուզում վերջնական ձևակերպում տալ, դրա համար մենք մի ամբողջական տարի ունենք: Սակայն, դա ամենակարևորն է: Եկեք կենտրոնանանք էականի վրա՝ ինչքան էլ մենք տարբեր լինենք համայնքում, մենք ունենք նույն նպատակը և պետք է հենց նույն ճանապարհով գնանք, որպեսզի հասնենք նպատակին: Դրա համար կարիք կա միավորվելու: Այն գլխավորը, որն իմ սրտումն է, այն է, որ ,, Քրիստոսը մեր ապագան է,,: Դա իմ ապագան է, բայց և իմ երեխաների ապագան է: Մենք հոգում ենք նրանց համար:

Ես պատկերացնում եմ այն ծնողներին, ովքեր փոքր երեխաներ ունեն և հարց են տալիս. ,, Ի՞նչ է լինելու մեր երեխաներ հետ: Ի՞նչ ապագա են նրանք ունենալու: Ինչպե՞ս պետք է շարունակվի,,: Քույրեր և եղբայրներ, Քրիստոսը նաև նրանց ապագան է, նոր սերնդի ապագան է, երիտասարդների, երեխաների: Անգամ, եթե պայմանները բոլոր տեսանկյուններով լիովին այլ են, մի բան պարզ է, որ Քրիստոսը նաև նրանց ապագան է: Քրիստոսը նաև այն ճանապարհն է, որը նրանց կարող է տանել դեպի այդ ապագան: Նրանց համար լավագույն լուծումը Քրիստոսն է, նրա ուսմունքը, նրա Ավետարանը: Նա նաև նրանց հավատի զորագլուխն ու կատարելագործողն է: Նաև մեր երեխաների համար է կարևոր այն, որ Քրիստոսը նրանց ապագան է:.

Իսկ դա կարող է այդպես լինել այն պարագայում, երբ նրանք նկատեն, որ Քրիստոսը նաև մեր ապագան է: Մենք չենք կարող մեր երեխաներին հավատացնել, որ Քրիստոսը նրանց ապագան է, եթե նրանք չզգան, չնկատեն, չտեղեկանան, որ Քրիստոսը իրենց ծնողների ապագան է: Որպեսզի կարողանան իմանալ, որ Քրիստոսը նրանց ապագան է, նրանք պետք է ճանաչեն Քրիստոսին՝ նրա անցյալն ու ներկան: Որպեսզի կարողանան իմանալ, որ Քրիստոսը իրենց ապագան է, նրանք պետք է ճանաչեն Հիսուս Քրիստոսին որպես մարդ՝ նրա գործերը, նրա էությունը, երբ նա ապրում էր երկրի վրա: Դա նրանք չեն տեսնում էկրանի վրա: Դա նրանք չեն լսում սոցիալական լրատվությամբ: Դա նրանք պետք է լսեն իրենց ծնողներից: Ես ծնողներին կոչ եմ անում՝ դուք կարիք չունեք ձեր երեխաներին քարոզելու, դա ես էլ երբեք չեմ արել, այդտեղ ոչ մի շանս չկա, սակայն պետք է պատմել նրանց ինչ –որ բան Հիսուսի մասին, օրինակ այսպես՝ ,, Ախ, դա ինձ մի պատմություն է հիշեցնում: Մի անգամ Հիսուսը այս կամ այն բանն է արել,,: Դա անել միանգամայն ինքնաբարեբար, շատ նորմալ, որպեսզի նրանք նկատեն, որ դա ոչ միայն մի պատմություն է, այլ՝ որ հայրը, մայրը հավատում են, որ կար Տեր Հիսուսը, և թե ինչպես էր նա գործում:Եկեք շատ պարզ ձևով ներգործենք՝ ,, Ախ, այո, Տեր Հիսուսը մի անգամ դա արել է, նա այս բանն է ասել, նա այսպես է գործել, նա այսպես է արձագանքել,,: Դա կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհիների առաջադրանքը չէ, դա ծնողների առաջադրանքն է: Եկեք մեր երեխաներին ցույց տանք նաև Հիսուս Քրիստոսի ներկան և ասենք՝ ,, Ախ, դու գիտե՞ս, Հիսուսի տեսանկյունով պետք է այսպես գնահատել: Եթե նա հիմա այստեղ լիներ, ապա նա այսպես կգործեր, նա այսպես կասեր,,: Մեկ անգամ ևս՝ սա ծնողների առաջադրանքն է, ոչ թե՝ հասարակության, ոչ թե՝ եկեղեցու, ոչ թե՝ ուսուցիչների, այլ՝ ծնողների:

Մխիթարիչ խոսք է՝ Քրիստոսը մեր երեխաների ապագան է: Որպես կոչ, որ դա իսկապես այդպես է, նրանք պետք է նկատեն և զգան, որ Քրիստոսը նաև մեր ապագան է: Միայն այդ դեպքում մենք կարող ենք դա նրանց տեղեկացնել:

Քրիստոսը- մեր ապագան – դա կարևոր է համայնքի համար, մեր երեխաների համար, նաև մնացած բոլոր մարդկանց համար: Մենք գիտենք, որ Քրիստոսը աշխատում է այն բանի վրա, որ բոլոր մարդիկ հնարավորություն ունենան իրենով փրկվելու: Դա նրա փրկչական պլանի նպատակն է: Դա պետք է ազդի նաև մեր կյանքի և մյուս մարդկանց հանդեպ մեր հարաբերությունների վրա: Ոչ մի դեպքում չմոռանանք՝ Տեր Հիսուսը ուզում է նաև այդ մարդուն դեպի իրեն բերել, անգամ եթե նա չար է, վատն է: Մեր առաջադրանքն է մյուսների համար հնարավոր դարձնել Աստծու սերը ճանաչելը: Նա պետք է իմանա, որ Աստված սիրում է իրեն, իսկ նա դա կարող է միայն մեզնով իմանալ: Քրիստոսը նաև իմ մերձավորի ապագան է:

Հիմնական մտքեր

Մեր ապագան Քրիստոսն է:

- Մեր նպատակը Քրիստոսի մոտ լինելն է:
- Որպեսզի դրան հասնենք, մեր ուժերն ու մոտիվացիան պետք է ստանանք Քրիստոսից:
- Այն ապագան, որը մենք ենք ընտրել, որոշում է մեր առօրյան:

ՍՈՂՈՍԻ ԴԱՐՁԸ

ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑԻ 9, 1-19

Սողոսը հալածում և սպառնում էր Հիսուսի աշակերտներին, նա արդեն շատերին էր բռնել: Մի օր նա գնում է քահանայապետի մոտ և նրանից լիազորություն խնդրում, որպեսզի Դամասկոսի ժողովարաններում գերի վերցնի նոր ուսմունքին հետևողներին և Երուսաղեմ բերի:

Սողոսը ճանապարհ է ընկնում: Երբ նա մոտենում է Դամասկոսին, հանկարծակի նրա շուրջը երկնքից մի լույս է փայլատակում: Նա ընկում է գետնին, լսում մի ձայն, որ իրեն ասում է. ,, Սավուղ, Սավուղ, ինչու՞ ես հալածում ինձ,,:
Սավուղը հարցնում է. ,, Ո՞վ ես դու, Տեր,,:
Եվ ձայնն ասում է. ,, Ես Հիսուսն եմ, որին դու հալածում ես: Ոտքի կանգնիր և այդ քաղաքը մտիր, ու քեզ կասվի, թե դու ինչ պետք է անես,,:
Այն տղամարդիկ, ովքեր ուղեկցում էին Սավուղին, անխոս կանգնած էին, միայն ձայնն էին լսում, բայց ոչ մեկին չէին տեսնում:

Սավուղը կանգնում է: Երբ նա բացում է իր աչքերը, չի կարողանում այլևս ոչինչ տեսնել, նա կույր էր: Նրան ուղեկցողները բռնում են նրա ձեռքից և տանում դեպի Դամասկոս: Երեք օր Սավուղը չի կարողանում տեսնել, և ոչինչ չի ուտում ու չի խմում: Դամասկոսում ապրում էր մի աշակերտ: Նրա անունը Անանիա էր: Հիսուսը տեսիլքով երևում է նրան և ասում.,, Անանիա,,:

Անանիան պատասխանում է .
,,Ես այստեղ եմ, Տեր,,։
Հիսուսն ասում է. ,,Ոտքի կանգնիր ու գնա այն փողոցով, որ Ուղիղ է կոչվում, և Հուդայի տունը կփնտրես Սողոս անունով Տարսոնացուն, որ դեռ աղոթքի մեջ է։ Աստված արդեն նրան ցույց է տվել, որ դու, Անանիա, նրա մոտ ես գնալու և ձեռքերդ նրա վրա ես դնելու, որպեսզի նա նորից կարողանա տեսնել,,։
Անանիան պատասխանում է. ,, Տեր, շատերից լսեցի այս մարդու մասին, թե որքան չարիքներ է արել Երուսաղեմում քո սրբերին, և այստեղ էլ քահանայապետերից իշխանություն ունի կապանքի տակ պահելու բոլոր նրանց, որ քո անունն են կանչում,,։

Սակայն Տերը նրան ասում է. ,, Գնա դու, որովհետև Սավուղն ինձ համար ընտրյալ անոթ է՝ իմ անունը տանելու հեթանոսների, թագավորների և իսրայելացիների առաջ, քանի որ ես ինքս եմ նրան ցույց տալու, թե նա ինչքան պետք է չարչարվի իմ անվան համար,,։
Անանիան գնում է և մտնում այդ տունը, ու ձեռքը դնելով նրա վրա՝ ասում է . ,, Սավուղ եղբայր, վեր նայիր, Տերն ինձ ուղարկեց, Հիսուսը, որը քեզ երևաց այն ճանապարհի վրա, որով գալիս էիր, որպեսզի տեսնես ու լցվես Սուրբ Հոգով,,։
Եվ այդ պահին նա տեսնում է։ Նա ոտքի է ելնում և մկրտվում։ Եվ սնունդ է ընդունում և զորանում։
Մի քանի օր անց նա սկսում է բոլոր մարդկանց պատմել Հիսուսի մասին։

Աղբյուրը՝ Անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 08/2019, ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԴԵՅՎԻԴԻ ՄՈՏ՝ ԷՔՍՈՒ ՔԱՂԱՔՈՒՄ / ԲՐԱԶԻԼԻԱ/

Ողջույն, ես Դեյվիդն եմ:

Սա մեր եկեղեցին է Էքսու քաղաքում, այն կարելի է մեր տնից տեսնել: Այդ եկեղեցում եմ ես մկրտվել և կնքվել:

Իմ մայրն ու զարմուհին կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհիներ են: Այն օրը, երբ այս լուսանկարն արվում էր, պարապմունքն անց էր կացնում իմ մայրը: Համայնքում մի քանի երեխա ենք՝ իմ զարմիկներ Ֆլադսոնը և Իսրայելը ու ես:

Երբ համայնքում որևէ մեկի ծննդյան օրն է լինում, մենք բոլորս հավաքվում ենք, որպեսզի շնորհավորենք հոբելյարին: Մենք ջանում ենք սիրով վերաբերվել միմյանց և մեր հավատն ապրել մեր Տիրոջ հետ միասնության մեջ:

Սա իմ ընտանիքն է՝ իմ հայր Ֆրանցիսկոն շրջանային ավագ է և հոգևոր խնամք է տանում մեր համայնքում: Իմ մայր Վալդեթեն է, իմ եղբայր Մարկուսը և ես:

Իմ դպրոցը մեր տնից հեռու չէ, ես հաճախում եմ երրորդ դասարան: Ամեն օր ինձ մայրս է դպրոց տանում: Հետևում կանգնած է իմ ուսուցչուհի Ափարեսիդան: Նախընտրում եմ նստել առջևում, քանի որ հետևում ինձ համար բարձր է: Այդ օրը ես իմ ուսուցչուհուն տվեցի մեր եկեղեցու ամսագրերից մեկը:

Դասարանում մենք 28 աշակերտ ենք, այստեղ դուք տեսնում եք իմ դասարանցիներին, երկուսը բացակայում են…

Իմ սիրելի ուտեստը քուսկուզն է, հյուսիս-արևելյան Բրազիլիայի ուտեստներից մեկը, որը պատրաստվում է շոգեխաշած եգիպտացորենի փաթիլներից: Ես հաճույքով ուտում եմ նաև տապակած միս, կարտոֆիլ և, իհարկե, պիցցա:

Սա Մագգին է: Հովվաշունը պատկանում է իմ եղբորը, սակայն ես հաճախ եմ խաղում կամ զբոսնում նրա հետ: Ես ունեմ նաև մի փոքրիկ զվարթ ձկնիկ: Ես կենդանիներ շատ եմ սիրում

Իմ ազատ ժամանակ ես սիրով հեծանիվ եմ վարում: Լուսանկարում դուք ինձ տեսնում եք ,, Աքուդե Իթամագի,, լճի մոտ, որը գտնվում է քաղաքի եզրին: Այնտեղ, որտեղ հեծանիվն է դրված, հիմա լի է ջրով, որովհետև այստեղ շատ անձրևներ են տեղացել: Երբ խոսում են մեր տարածաշրջանի մասին, ամենաշատը հիշում են երաշտը, կակտուսները և չորացած ծառերը: Բայց դա այդպես չէ: Մենք ունենում ենք անձրևների ժամանակաշրջան, երբ ամեն ինչ նորից կանաչում է և գեղեցկանում:

Ես շատ ընկերներ ունեմ: Ես հաճույքով եմ ժամանակ անցկացնում նաև իմ զարմիկների հետ: Այստեղ մենք իմ ծնողների հողամասում ենք: Երբեմն բերքը շատ լավ է լինում, որը բավարարում է մեր ընտանիքին և կարողանում ենք մի մասն էլ վաճառել:

Աղբյուրը՝ Անագին՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 08/ 2019; լուսանկարները՝ մասնակցի, © nakornchaiyajina, © Tim UR, © msk.nina, © atoss, © kovaleva_ka - stock.adobe.com

Լուսանկարը՝ ©Photographee.eu - stock.adobe.com

Մարդկային կյանքի ավարտը

Հակաբեղմնավորիչ միջոցներ և օրգանների նվիրատվություն, երեխաներ ունենալու ցանկություն և էֆթանազիա՝ կյանքի և մահվան վերաբերյալ հարցերն անմիջական են ու շատ անձնական: Որպեսզի հավատացյալներին իրենց անձնական պատասխանատվության որոշման համար կողմնորոշում տրվի, գործի հանգամանքը նորառաքելական հավատքի տեսանկյունով լուսաբանում է ,, Մարդկային կյանքի սկիզբն ու ավարտը,, պաշտոնական մշակումը:

Մեր հավատի տեսանկյունով մարդը ստեղծվել է Աստծո նմանությամբ և մասնիկն է ինչպես տեսանելի, այնպես էլ անտեսանելի արարչագործության: Մարդու հոգևոր բնույթը անմահ է: Մարմինը ձևավորվում է ձվաբջիջի և սերմնաբջիջի միավորման միջոցով և ավարտվում է մահանալով՝ մահով:

20-րդ դարի երկրորդ կեսից ի վեր կենսաբժշկական գիտությունը հնարավոր է դարձնում մարդկային կյանքի սկզբնավորմանն ու ավարտին վերահսկողաբար միջամտելը: Քանի որ մարդը՝ որպես Աստծո պատկեր, առաձնահատուկ ձևով արժանի է պաշտպանության, ապա առաջ է քաշվում մարդկային կյանքի ճշգրիտ սկզբի և ավարտի մասին հարցը, որպեսզի չսպանեն, ինչպես նշված է աստվածային պատվիրանում: Մեր հավատի տեսանկյունից կարևոր է այն, թե մարդկային կյանքը երբ է լցվում հոգով և երբ է մահվան ընթացքում ոգին ու հոգին անջատվում մարմնից: Այստեղ առկա է սերտ կապ ննջեցյալների էության հետ:

Անձնական պատասխանատվություն և կողմնորոշում

Որպեսզի հավատացյալներին իրենց անձնական պատասխանատվության որոշման համար կողմնորոշում տրվի, մեր հավատի տեսանկյունով լուսաբանվում են մարդկային կյանքի սկզբնավորմանն ու ավարտին միջամտելու կենսաբժշկական մեթոդներն ու հնարավորությունները:

Կոնկրետ հակաբեղմնավորիչ միջոցների ընդունման կամ արհեստական բեղմնավորման մեթոդների պարագայում պետք է հաշվի առնվի, թե արդյոք կանխվում է մարդկային կյանքի զարգացումը կամ արդյոք այդ կյանքը սպանվում է: Այս համատեքստում խոսվում է նաև մարդկային կյանքի դադարեցման մասին, երբ ոչնչացվում են արհեստական բեղմանվորված ձվաբջիջները կամ էլ վիժեցվում են արգանդում զարգացող էմբրիոնները / սաղմերը/: Էֆտանազիայի և ուղեղը մահացած մարդկանց օրգանների հեռացման պարագայում կարևոր է, որ չլինի կյանքի ակտիվորեն կրճատում կամ նույնիսկ սպանություն:

Կարծիք սկզբի վերաբերյալ

,, Մարդկային կյանքի սկզբի մասին,, եկեղեցու „community“ ամսագիրը լուսաբանել է նախորդ համարում: Այս առնչությամբ նորառաքելական եկեղեցու պաշտոնական կարծիքը հետևյալն է՝

- Որպեսզի մարդուն՝ որպես Աստծո պատկերի, լավագույնս պաշտպանեն, եկեղեցին հարգում է մարդկային կյանքը բեղմնավորման պահից սկսած և մերժում է այդ կյանքի սպանությունը: Այդ կյանքն ունի մարդկային անսահման առաքինություններ:
- Թե երբ տեղի կունենա հոգով լցվելը, դրված է Աստծո ձեռքին և մարդկային տեսանկյունով դժվար ըմբռնելի է: Այնուամենայնիվ, եկեղեցին հոգով լցված մարդկային կյանքը հնարավորինս պաշտպանելու համար ենթադրում է, որ հոգով լցվելը տեղի է ունենում սերմնաբջիջների ու ձվաբջիջների միաձուլման ժամանակ:
- Այն ընդունում է կենսաբժշկական այն մեթոդներն ու գործողությունները, որոնց շնորհիվ ոչ մի բեղմնավորված ձվաբջիջ նախապես չոչնչացվի / մարդկային ոչ մի ընտրություն/:
- Եկեղեցին գիտի, որ կա բնական, կենսաբանական ընտրություն, որի ժամանակ առանց մարդկային միջամտության՝ մահանում են ոչ քիչ թվով բեղմնավորված ձվաբջիջներ / էմբրիոներ/ :
- Մեր եկեղեցու կարծիքին համապատասխանող ձեռնարկումը կարող է սահմանափակել բժշկական հնարավորությունները: Այդ սահմանափակումները պետք է ընդունվեն Աստծո հանդեպ վստահություն ունենալով, որովհետև մարդկային կյանքը տրված է Աստծո կողմից և հիմնովին արժանի է հարգանքի:

Մահվան պրոցեսը

Մարդկային կյանքի վերջում կա մահվան պրոցես, որն ավարտվում է մարմնի մահով: Կախված պատճառից՝ մահանալու պրոցեսը կարող է երկար ժամանակ տևել կամ մահը կարող է վրա հասնել վայրկյանների ընթացքում: Մահը վրա հասնելու պահին մարվում է կենսաբանական կյանքը և անմահ հոգին բաժանվում է մարմնից:

Լուսանկարը՝ Սերգեյ Չիրկով - stock.adobe.com

Լուսանկարը՝ ©freshidea - stock.adobe.com

Ինտենսիվ բժշկության զարգացող հնարավորություններով մոտ 1960 –ից ի վեր կոմայի մեջ գտնվող պացիենտներ կարողանում են արհեստականորեն կենդանի մնալ: Հիմա հարց է առաջանում, թե ճշգրիտ երբ է մահը վրա հասնելու, նոր կամ բոլորովին այլ ձևով, քանի որ կարիք կա է ամրագրելու, թե ինչ պայմաններում կարող են նորից ավարտվել կենդանի պահող միջոցառումները:

Որոշ մարդիկ մերձավորի հանդեպ սիրուց ելնելով՝ ցանկանում են իրենց մահից հետո մյուսներին օգնել իրենց օրգանները նվիրաբերելով: Այստեղ ևս անհրաժեշտ է մահվան տարբերակումը, որովհետև նախ կարող են օրգանները հեռացնել մահից հետո, բայց դրանք պետք է հեռացվեն այն ժամանակի ընթացքում, երբ դրանք դեռ պիտանի կլինեն:

Մահվան պրոցեսում ցավերը մեղմացնելու կամ մահվան կռիվը հեշտացնելու համար՝ ,, արժանապատիվ մահանալու,, իմաստով, հարազատներն ու բժիշկները խորհում են էֆտանազիայի մասին: Այդ մտքերը մասամբ կազմում են նաև հետագայի հոգացողության բաղկացուցիչ մաս՝ պացիենտի կամքի դրսևորման շրջանակում:

Այս ոլորտներում այսօր պահանջվում են իրավաբանական շրջանակի որոշումները: Մեր հավատի տեսանկյունից ելնելով՝ տրվում են օգնություններ որոշման համար:

Բժշկական տեսանկյուն

Մեռնելուց առաջ տեղի է ունենում մահանալու պրոցեսը: Դա ճշտապահորեն կատարվող իրադարձություն չէ, այլ օրգանների ֆունկցիաների աստիճանական դադարում՝ մինչև առանձին բջիջներ: Այսպես օրինակ, սրտի կանգից ու ուղեղի մահից հետո շաբաթներ շարունակ կարող են շարակցական հյուսվածքների բջիջները ապրել: Ուղեղը մարմնի վճռորոշ վերահսկող օրգանն է: Նրա մահից հետո անդառնալիորեն մահանում են բոլոր օրգանները և հյուսվածքները: Որպես կանոն՝ ուղեղի մահը վրա է հասնում սրտի վերջնական կանգից մի քանի րոպե հետո:

Սրտի դեռ առկա աշխատանքի դեպքում արհեստականորեն շնչող պացիենտի մոտ այսօր հնարավոր է որոշել ուղեղի, ներառյալ ուղեղի ցողունի ֆունկցիայի ամբողջական և անդառնալի դադարումը: Դա հանգեցրել է նրան, որ բժշկական

տեսանկյունից որպես մահվան չափորոշիչ ամրագրվում է ոչ թե սրտի մահը, այլ՝ ուղեղի մահը: Որպեսզի հնարավորինս լիովին համոզված լինեն ուղեղի մահվան ամրագրման մեջ, պետք է երկու անկախ բժիշկ մասնագետների կողմից պարբերաբար հավաքվեն ընդգրկուն հետազոտության արդյունքները: Ուղեղի մահը սահմանվում է որպես գլխուղեղի, փոքր ուղեղի և ուղեղի ցողունի ընդհանուր ֆունկցիայի անդառնալիորեն մարման վիճակ: Ընդ որում, վերահսկվող շնչառության շնորհիվ՝ արհեստականորեն դեռ պահպանվում է սրտանոթային շրջանառության ֆունկցիան:

Արթուն կոման համատեղելի է կյանքի համար երկարատև պայքարի հետ և պետք է առանձնացնել ուղեղի մահից: Խոսքը դեպի գլխուղեղ արյան հոսքի երկարատև խանգարման հետևանքի մասին է, ընդ որում, երբ ուղեղի ցողունը դեռ գործում է: Պացիենտները կարող են աչքերը բաց պահել, բայց ոչ մի առարկա չնկատել: Հնարավոր չէ նաև խոսելը և արտաքին գրգիռներին արձագանքելը: Սակայն, առկա են լինում որոշ ռեֆլեքսներ, ինչպիսիք են ներծծման և բռնելու ռեֆլեքսները:

Իրավաբանական տեսանկյուն

Շատ երկրներում իրավաբանական տեսանկյունով մահը վրա է հասնում այն պահին, երբ բժշկական սահմանված գնահատմամբ ամրագրվում է ուղեղի մահը:

Կրոնական տեսանկյուն

Կյանքի ավարտի առումով բոլոր կրոններում ավելի կարևոր են մահվան պրոցեսը և հոգին խնամողների ու հարազատների կողմից մահացողի մոտ լինելը, քան՝ մահվան ճշգրիտ ժամանակահատվածը: Տարբեր դավանանքներում և կրոններում մահացողների համար կան՝ բարեխոսության և ապաշխարության կանոններ՝ կապված մահանալու և մարմինը տալու հետ:

Օրգանների նվիրաբերման կամ դիակիզման թեմաների վերաբերյալ կարծիքները վճռական դեր են խաղում մահից հետո կյանքի մասին պատկերացումներում:

Քրիստոնեական հավատի մեջ մահանալը մեկնաբանվում է որպես անցում անդրշիրիմյան աշխարհ: Քրիստոնեական մեծ եկեղեցիների կողմից ընդունվում է ուղեղի մահվան չափորոշիչը և պաշտպանվում է օրգանների նվիրաբերումը: Չի ամրագրվում այն ժամանակահատվածը, երբ հոգին թողնում է մարմինը:

Նորառաքելական եկեղեցու կարծիքը մարդկային կյանքի ավարտի վերաբերյալ:

- Չի կարող նշվել ինչ-որ ճշգրիտ ժամանակահատված, երբ հոգին բաժանվում է մարմնից: Աստվածաշնչում դրա վերաբերյալ ոչ մի վկայություն չկա, չկա նաև ոչ մի գիտական մեթոդ դա որոշելու համար: Բացի այդ, կյանքն ու մահը միահյուսված են իրար, այնպես որ, կամայական է թվում այն ժամանակահատվածի ճշգրիտ որոշումը, երբ հոգին բաժանվում է մարմնից:
- Որպեսզի մարդուն՝ որպես Աստծո պատկերի, լավագույնս պաշտպանեն, եկեղեցին անսահման հարգում է մարդկային կյանքը մինչև ուղեղի մահը և մերժում է այն միջամտությունները, որոնք կարագացնեն մահը:
- Եկեղեցին ելնում է այն բանից, որ ուղեղի մահով տեղի է ունենում հոգու բաժանումը մարմնից: Հոգուց բաժանված մարմնի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքը շատ կրոնների համար ավանդույթ է և կարևոր այն իրավիճակների համար, երբ ուղեղի մահից հետո արհեստականորեն պահպանվում են շնչառությունն ու արյան շրջանառությունը, որպեսզի ինպլանտացիայի համար կարողանան հեռացնել օրգանները:

Ամփոփում

Հոգով լցվելու ժամանակահատվածը և այն պահը, երբ հոգին բաժանվում է մարմնից, միանշանակ չեն կարող ամրագրվել: Մարդկային կյանքի պաշտպանության համար եկեղեցին ելնում է այն բանից, որ հոգով լցվելը տեղի է ունենում բեղմնավորման ժամանակ, իսկ ուղեղի մահով ավարտվում է հոգով լցված կյանքը: Այն պետք է պաշտապանել, և չի կարելի ակտիվ միջամտությամբ այն ավարտել:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսթրասսե 243, 8051 Ցյուրիխ / Եյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Փոփոխություններ առաքյալների շրջանում

2020-ի երկրորդ կիսամյակում առաքյալների շրջանում եղան քիչ ձեռնադրություններ և հանգստի ուղարկումներ- կորոնայով պայմանավորված ուղևորությունների սահմանափակումների պատճառով՝ գլխավոր առաքյալի առաջադրանքով այդ գործը կազմակերպում էին շրջանային առաքյալները: Այսօր ամբողջ աշխարհում գործում է 348 առաքյալ:

Լուսանկարները՝ ՆԱԵ Կանադա, ՆԱԵ Հարավային Աֆրիկա, ՆԱԵ Կոնգոյի ԴՀ

վերևում՝ առաքյալ Լիոնել Մեյեր
ձախում՝ առաքյալ Ջոնաթան Կարլ Շթուրմ և առաքյալ Արնաուդ Մարթիգ

2020-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր առմամբ 250 500 սարկագավագի և քարոզչի ծառայություններ կատարող սպասավոր եղբայրներ են գործում: Առաքյալների հետ միասին նրանք ամբողջ աշխարհում հոգում են 57 800 համայնքների քույր-եղբայրների համար: Ակտիվ ծառայության մեջ են 325 առաքյալ, շրջանային առաքյալների 7 օգնական, 15 շրջանային առաքյալ և մեկ գլխավոր առաքյալ:

Ձեռնադրություններ

Շրջանային առաքյալ Մարկ Վոլլը 2020-ի դեկտեմբերի 20-ին առաքյալներ ձեռնադրեց եպիսկոպոս Ջոնաթան Կարլ Շթուրմին / 1976/ Արևմտյան Կանադայի համար և շրջանային ավետարանիչ Արնաուդ Մարթինգին / 1971/ Կենտրոնական և Արևելյան Կանադայի համար: Վերջինս որպես ղեկավար- առաքյալ ստանձնում է լրացուցիչ պատասխանատվություն Կոնգոյի Հանրապետության, Կենտրոնական աֆրիկյան Հանրապետության, Ռուանդայի և Չադի համար:

Հանգստի ուղարկումներ

2020-ի սեպտեմբերի 20-ի կիրակի օրը շրջանային առաքյալ Ջոհն Քրիելը հանգստի ուղարկեց առաքյալ Լիոնել Մեյերին /1955/: Առաքյալ Մեյերը տասը տարի գործունեություն է ծավալել այսօրվա շրջանային առաքյալի աշխատանքային տարածաշրջանում՝

Աֆրիկայի հարավում: Արարողությունը շրջանային առաքյալը կատարեց Բարբերթոնում / Հարավային Աֆրիկա/:

2020-ի դեկտեմբերի 20-ի կիրակի օրը շրջանային առաքյալ Մարկ Վոլը հանգստի ուղարկեց շրջանային առաքյալի օգնական Ջոհն Սոբոթթկային /1956/: Շուրջ 17 տարի շրջանային առաքյալի օգնականը իր ծառայությունն է կատարել Ասիայում, Աֆրիկայում և Կանադայում: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հաճույքով կգնար, սակայն կորոնայի համավարակի պատճառով նա չկարողացավ Կանադա մեկնել:

Տարկետումներ/ պաշտոնաթողություններ

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հոկտեմբերին առաքյալ Բաքեր Չակվանային / Զամբիա/ ընտանեկան խնդիրների պատճառով մեկ տարի ժամանակով տարկետում տվեց: Առաքյալ Գաբին Մվեմենան / Կոնգոյի ԴՀ Հարավ-արևելք/ նոյեմբերի վերջին անձնական պատճառներով թողեց իր պաշտոնը: Եկեղեցու միջազգային ղեկավարը իր համաձայնությունը տվեց այդ որոշմանը:

Շրջանային առաքյալների աշխատանքային տարածաշրջաններ

Նորառաքելական եկեղեցին ամբողջ աշխարհում առանձնացրել է շրջանային առաքյալների 15 աշխատանքային տարածաշրջաններ: Այդ տարածաշրջանները ղեկավարվում են շրջանային առաքյալների կողմից: Պատասխանատու են հետևյալ առաքյալները՝

- Միխայել Դավիդ Դեփփներ / 1961/ - Կոնգոյի ԴՀ-ի արևմուտք
- Միխայել Էրիխ / 1959/ - Հարավային Գերմանիա
- Յոզեֆ Օփեմբա Էքհույա / 1969/ - Արևելյան Աֆրիկա
- Էդի Իսնուգրոհո / 1963/ - Հարավ-արևելյան Ասիա
- Լեոնարդ Ռիչարդ Քոլբ / 1956/ — ԱՄՆ
- Ռյուդիգեր Լեոնարդ Քրաուսե / 1960/ - Հյուսիսային և Արևելյան Գերմանիա
- Ջոհն Լեսլիե Քրիել / 1956/ - Աֆրիկայի հարավ
- Էնրիկքվե Էդուարդո Մինիո / 1960/ - Հարավային Ամերիկա
- Վոլֆգանգ Նադոլնի / 1956/ - Բերլին-Բրանդենբուրգ
- Փեթեր Շուլթե /1963/ - Արևմտյան Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան
- Քուբուբա Սոկո /1969/ - Զամբիա, Մալավիա, Զիմբաբվե
- Ռայներ Շթորք / 1958/ - Արևմտյան Գերմանիա
- Չիչի Չիսեքեդի / 1972/ - Կոնգոյի ԴՀ հարավ-արևելք
- Մարկ Վոլլ / 1959/ - Կանադա
- Յուրգ Զբինդեն / 1958/ - Շվեյցարիա

Մի քանի շրջանային առաքյալների աջակցում են շրջանային առաքյալների օգնականներ, ովքեր որպես կանոն գործում են ընտրված երկրներում՝

- Դավիդ Դեվարաջ / 1959/ - Հնդկաստան
- Ֆրանկ Շթեվան Ջուր / 1959/ - Կանադա
- Ջոհն Վիլլիամ Ֆենդթ /1957/ - ԱՄՆ
- Արնոլդ Նդակոնդվա Միանգո / 1957/ - Մալավի
- Ժոան Ուանուքվե Միսսելո / 1956/ Անգոլա
- Մանդլա Փաթրիկ Միվանազի / 1963/ - Աֆրիկա հարավ
- Ռոբերտ Նսամբա / 1962/ - Զամբիա

Առաքյալ Գաբին Մվեմենա

վերևում՝ շրջանային առաքյալի օգնական Ջոհն Սոբոթթկա
աջում՝ առաքյալ Բաքեր Չակվանա



Քրիստոսը -մեր ապագան

,, Համբերությամբ ընթանանք դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առաջ, նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին,,:

Եբրայեցիներին 12, 1,2

New Apostolic Church
International